




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«02» մարտ 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ. Մանյան

ԳԲԽ-21/17 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ի 14.02.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 14.02.2017թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության

նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Օստ-Շին» ՍՊԸ-ի և «Շելդա» ՍՊԸ-ի կոնսորցիումն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հարցում է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ, որի կողմից տրամադրված եզրակացությամբ պարզվել է, որ «Օստ-Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Կազմակերպություն)՝ 29.11.2016թ.՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն, ինչի հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Կազմակերպության հայտը՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելով «Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ին:

26.01.2017թ. «Օստ-Շին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին բողոք է ներկայացվել, որի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացությունը սխալմունքի արդյունք է եղել:

Նշված բողոքի դեմ Ընկերությունը առարկել է՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Ընկերությունը վկայակոչել է Օրենքի 48-րդ հոդվածի 9-րդ մասը, որի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Ըստ Ընկերության՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովը Օստ-Շին» ՍՊԸ-ի և «Շելդա» ՍՊԸ-ի հայտը պետք է մերժեր նաև ստորև ներկայացված պատճառաբանության, որը վերջինս չի արել և որի արդյունքում

Ընկերությունը հնարավոր է գրկվի ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարար լինելու լեգիտիմ իրավունքից, ինչի հետևանքով կկրի վնասներ և չի ստանա այն եկամուտները, որոնք վերջինս կստանար մատակարարման իրավահարաբերությունների շրջանակում (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետ):

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի հրավերի համաձայն մասնակիցը պետք է ունենա, ի թիվս այլի, նաև մասնագիտական փորձառություն:

Քանի որ ապրանքային շուկայի ոլորտում «Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ն գործում է 1996 թ. ից և քաջատեղյակ է շուկայում գործող համանման գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մասին, ինչպես նաև Ընկերության կողմից իրականացված մարքեթինգային հետազոտության արդյունքում Ընկերությունը պարզել է, որ «Շելդա» և «Օստ-Շին» ՍՊ ընկերությունները չունեն միս, մսամթերք և մսի սննդային ենթամթերքների մատակարարման՝ հրավերով պահանջվող գումարային արտահայտությամբ պատշաճ ձևով կատարված պայմանագիր (պայմանագրեր):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

«Շելդա» և «Օստ-Շին» ՍՊ ընկերություններին չճանաչել որպես Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից՝ նաև հիմք ընդունելով վերջիններիս մասնագիտական փորձառության ցուցանիշին չհամապատասխանելու հանգամանքը:

Նշվածի կապակցությամբ Ընկերությունը անհրաժեշտ է գտնում, որպեսզի հաստատվի այդ ընկերությունների մասնագիտական փորձառության ցուցանիշին չհամապատասխանելու հանգամանքը: Մասնագիտական փորձառության հիմնավորման համար «Շելդա» և «Օստ-Շին» ՍՊ ընկերությունները պարտավոր էին համապատասխան փաստաթղթերը ներկայացնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

Հիմք ընդունելով մարքեթինգային հետազոտության արդյունքները՝ Ընկերությունը պնդում է, որ «Շելդա» և «Օստ-Շին» ՍՊ ընկերությունները չունեն միս, մսամթերք և մսի սննդային ենթամթերքների մատակարարման հրավերով պահանջվող գումարային արտահայտությամբ պատշաճ ձևով կատարված պայմանագիր (պայմանագրեր): Իսկ

քանի որ այդ ապացույցներին հասկանալի պատճառներով Ընկերությունը չի տիրապետում, ուստի բողոքով Ընկերությունը միջնորդել է՝

1. Որպեսզի բողոքը քննող հանձնաժողովը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովից պահանջի ներկայացնել «Շելդա» և «Օստ-Շին» ՍՊ ընկերությունների մասնագիտական փորձառության ցուցանիշը հիմնավորող բոլոր փաստաթղթերի (պայմանագրի/գրերի և դրա պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերի) պատճենները, ինչպես նաև՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից այդ պայմանագրերի շրջանակներում «Շելդա» և «Օստ-Շին» ՍՊ ընկերությունների կողմից դուրս գրված հարկային հաշիվների և (կամ) հաշիվ-ապրանքների պատճենները:

2. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել ՀՀ պաշտպանության նախարարության և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները՝ ընդհուպ մինչև պայմանագիր կնքելու գործընթացը, որը ԳԲԽ-21/17 բողոքը քննող հանձնաժողովի 21.02.2017թ. միջանկյալ որոշմամբ բավարարվել է:

Ընկերությունն, ի լրումն բողոքի, 15.02.2017թ. ներկայացրել է գրություն, որով բողոքով ներկայացված պահանջը վերաձևակերպել է հետևյալ կերպ. դադարեցնել «Շելդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանելու մասին «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2016թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետի առաջին պարբերությամբ կայացված որոշումը:

Ընկերությունը 20.02.2017թ., ի լրումն բողոքի, Խորհրդին ներկայացրել է գրություն, որով հայտնել է.

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների

ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս
չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային
առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում
մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ
տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային
առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում 1-ին չափաբաժնի համար
ձկնեղեն, իսկ 2-րդ չափաբաժնի համար միս, մսամթերք և մսի սննդային
ենթամթերքների, մատակարարման պայմանագրերը:

Վերոհիշյալ չափանիշին վերաբերող պահանջը ապահովելու նպատակով «Շելդա»
ՍՊԸ-ն ներկայացրել է իր և «Լիկա 1» ՍՊԸ-ի միջև 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1
մատակարարման պայմանագիրը, որտեղ առաջինը հանդես է գալիս որպես
Վաճառող, իսկ երկրորդը՝ Գնորդ:

Համաձայն այդ պայմանագրի՝ Գնորդին պետք է մատակարարվեր կարտոֆիլով
վարենիկ, երշիկ կիսաապխտած, պելմենի, նրբերշիկ, սարդեկա և սալ:

Այդ պայմանագրի գինը բախշված է հետևյալ կարգով՝

Պելմենի՝ 12 912 900 ՀՀ դրամ

Երշիկ կիսաապխտած՝ 9 099 280 ՀՀ դրամ

Կարտոֆիլով վարենիկ՝ 415 800 ՀՀ դրամ

Նրբերշիկ՝ 6 003 000 ՀՀ դրամ

Սարդեկա՝ 7 307 560 ՀՀ դրամ

Սալ՝ 1 359 000 ՀՀ դրամ

Ընդամենը՝ 37 097 540 ՀՀ դրամ:

Ըստ ընկերության՝ առաջին հայացքից նախկինում «կատարված» պայմանագիրը
գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի
շրջանակներում «Շելդա» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկի (50 937 696 ՀՀ
դրամ, որն իր մեջ ներառում է ԱԱՀ) հիսուն տոկոսից (25 468 848 ՀՀ դրամից):

Սակայն նշված պայմանագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն
պակաս է գնային առաջարկի հիսուն տոկոսից, քանի որ կարտոֆիլով վարենիկ և
պելմենի արտադրատեսակները չեն դասվում միս, մսամթերք և մսի սննդային
ենթամթերքների խմբին:

ՀՀ կառավարության 06.11.2014թ. թիվ 1406-Ն որոշմամբ հաստատվել են ապրանքների դասակարգման համար օգտագործվող՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը (ԱՏԳ ԱԱ), որտեղ նշված կարտոֆիլով վարենիկ և պեմենի արտադրատեսակներն ընդգրկված են թիվ 1902 ծածկագրի դիրքի ներքո՝ «մակարոնային արտադրատեսակներ՝ ջերմային մշակման ենթարկված կամ չենթարկված, միջուկով (մսից կամ այլ մթերքներից) կամ առանց միջուկի կամ այլ եղանակով պատրաստված...»:

Փաստորեն 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 մատակարարման պայմանագրով միս, մսամթերք և սննդային ենթամթերքները գումարային արտահայտությամբ կազմում են 23 768 840 ՀՀ դրամ, քանի որ 37 097 540 ՀՀ դրամի պայմանագրի մեջ 12 912 900 ՀՀ դրամը վերաբերում է պեմենիին, իսկ 415 800 ՀՀ դրամը՝ կարտոֆիլով վարենիկին:

Հետևաբար՝ «Շելդա» ՍՊԸ-ի կողմից մասնագիտական փորձառության չափանիշը չի կարող գնահատվել բավարար, քանի որ իրենք պարտավոր էին ներկայացնել միս, մսամթերք և մսի սննդային ենթամթերքների մատակարարման պատշաճ ձևով կատարված պայմանագիր (պայմանագրեր)՝ առնվազն իրենց գնային առաջարկի հիսուն տոկոսից ոչ պակաս, որը կազմում է 23 768 840 ՀՀ դրամի մատակարարման պայմանագիր:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մանրամասն չի ուսումնասիրել «Շելդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագիրը և հրավերի պահանջներին համապատասխանելու մասին 26.12.2016թ. թիվ արձանագրության 1.1 կետի առաջին պարբերությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կայացրել է ոչ ճիշտ որոշում:

20.01.2016թ. թիվ ԱՊ-1 մատակարարման պայմանագրի պատշաճ ձևով իրականացված լինելու վերաբերյալ Ընկերությունը հայտնել է, որ նշված փաստը ապացուցելու համար «Շելդա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին է ներկայացրել մի դեպքում մասնագիտական փորձառության մասին հայտարարությունը, իսկ մյուս դեպքում 22.11.2016թ. «Լիկա 1» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանքը:

Պայմանագրի պատշաճ կատարումը կարող է հաստատվել միայն «Շելդա» ՍՊԸ-ի կողմից դուրս գրված հարկային հաշիվներով և (կամ) հաշիվ-ապրանքագրերով, քանի

որ յուրաքանչյուր ապրանքի խմբաքանակ մատակարարելիս նա պարտավոր է կատարել հարկային օրենսդրությամբ նախատեսված այդ պահանջը:

Այսինքն 20.01.2016թ. թիվ ԱՊ-1 մատակարարման պայմանագրի պատշաճ ձևով իրականացրած լինելու հանգամանքը պետք է հաստատվի հարկային հաշիվների և (կամ) հաշիվ-ապրանքագրերի ներկայացման միջոցով:

Նշված հանգամանքը հաստատելու համար Ընկերությունը միջնորդել է՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից 20.01.2016թ. թիվ ԱՊ-1 մատակարարման պայմանագրի շրջանակներում «Շելդա» ՍՊԸ-ի կողմից «Լիկա1» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00897448) դուրս գրված հարկային հաշիվների և (կամ) հաշիվ-ապրանքագրերի պատճենները:

2. «Շելդա» ՍՊԸ-ից 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 մատակարարման պայմանագրով իրականացված մատակարարումների դիմաց ստացված վճարումները հիմնավորող վճարման հանձնարարագրերը:

Ընկերությունը 23.02.2017թ. ԳԲԽ-21/17 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած գրությամբ հայտնել հետևյալը.

21.02.2017թ. բողոքը քննելու նպատակով հրավիրված նիստի ընթացքում «ՕՍՇին» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից բողոքը քննող հանձնաժողովին ներկայացվել է թվով 112 դուրս գրված հարկային հաշիվների պատճեններ, որոնք ըստ ներկայացնողների պետք է ապացուցեն 20.01.2016թ. թիվ ԱՊ-1 մատակարարման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) պատշաճ ձևով իրականացված լինելու հանգամանքը:

Նշված հաշիվներն ուսումնասիրելուց հետո հաստատվում է ճիշտ հակառակը, այն է՝ Պայմանագիրն ոչ պատշաճ կերպով է կատարված, մասնավորապես՝

Թվով 95 հաշիվները վերաբերում են 02.02.2016թ.-10.11.2016թ. ընկած ժամանակահատվածին.

Թվով 16 հաշիվները վերաբերում են 20.01.2017թ.-18.02.2017թ. ընկած ժամանակահատվածին.

Իսկ մեկ հաշիվը վերաբերում է 24.05.2016թ., սակայն ստացողը «Էմֆուդ» ՍՊԸ-ն է, որը առհասարակ կապ չունի վերը նշված Պայմանագրի հետ:

Քանի որ թվով 16 հաշիվները դուրս են գրվել Պայմանագրով սահմանված ժամկետից՝ 11.11.2016թ. հետո, ուստի դրանք չեն կարող հանդիսանալ սույն գործի

համար որևէ հանգամանք հաստատող ապացույց: Իսկ 24.05.2016թ. դուրս գրված թիվ Ա4269190198 հաշիվը վերաբերում է Պայմանագրի կողմ չհանդիսացող «Էմֆուր» ՍՊԸ-ին:

Արդյունքում՝ հաշվարկելով թվով 95 հաշիվներում արտացոլված տեղեկությունները ստացվում է, որ «Շելդա» ՍՊԸ-ն «Լիկա 1» ՍՊԸ-ին մատակարարել է 36 266 860 (երեսունվեց միլիոն երկու հարյուր վաթսունվեց հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամի ապրանք, մինչդեռ ըստ Պայմանագրի պետք է մատակարարվեր 37 097 540 (երեսունյոթ միլիոն իննսունյոթ հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամի ապրանք:

Նշվածը նշանակում է, որ «Լիկա 1» ՍՊԸ-ի 22.11.2016թ. տեղեկանքը, որը վերաբերում է «Շելդա» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները 37 097 540 ՀՀ դրամ ընդհանուր գնով բարեխղճորեն և պայմանագրով նախատեսված ժամկետներում իրականացված լինելուն չի համապատասխանում իրականությանը: Ինչն իր հերթին նշանակում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է կեղծ տեղեկատվությունը:

Հրավերի «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնի համաձայն՝ որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

Ընկերությունը հայտնել է, որ ակներև է, որ «Շելդա» ՍՊԸ-ն չի բավարարում մասնագիտական փորձառությանն վերաբերող չափանիշը:

Նշված գրությամբ Ընկերությունը ԳԲԽ-21/17 բողոքը քննող հանձնաժողովին խնդրել է իրականացնել անհրաժեշտ գործողություններ նաև նշված հիմքով «Շելդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանելու մասին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2016թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետի առաջին պարբերությամբ կայացված որոշումը դադարեցնելու և այդ մասին անհապաղ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին տեղեկացնելու ուղղությամբ և (կամ) Ընկերության կողմից պարզաժամ հանգամանքերին վերջիններիս տեղեկացնելու ուղղությամբ:

Ընկերությունը 02.03.2017թ. գրություն է ներկայացրել ԳԲԽ-21/17 բողոքը քննող հանձնաժողովին, որով հայտնել է, որ Կազմակերպության կողմից ներկայացված հարկային հաշիվներն ուսումնասիրելուց հետո պարզվել է նաև, որ 22.02.2016թ. դուրս գրված Ա1886662714 և Ա1339086847 հաշիվների համաձայն՝ մատակարարված նրբերշիկների և սարդեկանների գները չեն համապատասխանում պայմանագրում նշված գնին, քանի որ պայմանագրով նրբերշիկի և սարդեկանների մեկ միավորի գինը կազմում է 920 ՀՀ դրամ, այսինքն՝ 150 ՀՀ դրամով ավելին է, քան Պայմանագրով համաձայնեցված գինն է: Արդյունքում մատակարարված է նրբերշիկի մասով 400 միավոր ապրանք և նույնքան՝ սարդեկայի մասով, իսկ յուրաքանչյուրի ընդհանուր գումարը կազմում է 428 001,6 ՀՀ դրամ, ամբողջը՝ 856 003,2 ՀՀ դրամ:

Գնային անհամապատասխանություն առկա է նաև.

1. 08.02.2016թ. դուրս գրված Ա9252139258 հարկային հաշվում. ըստ Պայմանագրի սալի մեկ միավորի գինը կազմում է 1510 ՀՀ դրամ, իսկ համաձայն նշված հաշվի այն մատակարարվել է 1550 ՀՀ դրամով՝ 40 ՀՀ դրամով պակաս, իսկ ամբողջ 500 միավորի գումարը կազմում է 775 002 ՀՀ դրամ:

2. 16.03.2016թ. Ա5465276899 հաշվի համաձայն՝ սալի մեկ միավորի մատակարարվել է 1540 ՀՀ դրամով՝ 30 դրամով ավել, քան պայմանագրով է նախատեսված, իսկ ամբողջ 50 միավորի գումարը կազմում է 77 000 ՀՀ դրամ:

3. Իսկ 30.09.2016թ. Ա8486516152 հաշվի համաձայն՝ սալի մեկ միավորի մատակարարվել է 1450,01 ՀՀ դրամով՝ 60 ՀՀ դրամով պակաս, քան պայմանագրով է նախատեսված, իսկ ամբողջ 30 միավորի գումարը կազմում է 507 502,80 ՀՀ դրամ:

Ընդամենը սալի մասով մատակարարվել է՝ 1 359 504,8 ՀՀ դրամի արտադրանք:

Ամբողջը՝ 2 215 508 ՀՀ դրամ:

Նշված գնային տարբերություններից բացի առկա է նաև անհամապատասխանություն մատակարարված քանակի մասով ևս, մասնավորապես՝

1. Պելմենի (թեև նշված արտադրատեսակը չի համարվում միս, մսամթերք և մսի սննդային ենթամթերքներ, այնուամենայնիվ Ընկերությունը հարկ է համարում այդ ապրանքի մատակարարման պայմաններին ևս անդրադառնալ)

Ըստ Պայմանագրի՝ պետք է մատակարարվեր 16 770 միավոր ապրանք, իսկ ըստ հաշիվների՝ մատակարարվել է 15 910 միավոր կամ 860 միավոր պակաս ապրանք:

2. Երշիկ կիսաապխտած՝

Ըստ Պայմանագրի՝ պետք է մատակարարվեր 8504 միավոր ապրանք, իսկ ըստ հաշիվների մատակարարվել է 8234 միավոր կամ 270 միավոր պակաս ապրանք:

3. Նրբերշիկ՝

Ըստ Պայմանագրի՝ պետք է մատակարարվեր 6526 միավոր ապրանք, իսկ ըստ հաշիվների՝ մատակարարվել է 6125 միավոր կամ 400 միավոր պակաս ապրանք:

4. Սարդելկա՝

Ըստ Պայմանագրի՝ պետք է մատակարարվեր 7943 միավոր ապրանք, իսկ ըստ հաշիվների՝ մատակարարվել է 7543 միավոր կամ 400 միավոր պակաս ապրանք:

Փաստորեն գնային տարբերության մասով դուրս գրված հաշիվները չեն կարող համարվել Պայմանագրի կատարումը հիմնավորող փաստաթղթեր: Բացի դրանից նշված հաշիվներում, ինչպես նաև բոլոր մնացածներում, բացակայում է այն նշումը, որը կվերաբերեր Պայմանագրի կատարմանը:

Ընկերությունը գտնում է, որ 23.02.2017թ. ներկայացված հաշիվ-ապրանքագրերի վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշման մեջ նշված 830 680 ՀՀ դրամ բացասական տարբերությանը պետք է գումարել նաև 2 215 508 ՀՀ դրամ: Արդյունքում Պայմանագրով սահմանված 37 097 540 ՀՀ դրամ ապրանքի փոխարեն մատակարարվել է 34 051 352 ՀՀ դրամի ապրանք:

Իսկ քանակի մասով անհամապատասխանությունը հաշվի առնելով ստացվում է, որ Պայմանագիրը կատարվել է մոտ 10 տոկոսով:

Ընկերությունը ներկայացրել է նաև պելմենին միս, մսամթերք և մսի սննդային ենթամթերքների խմբին չպատկանելու մասին ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալի, այսինքն իրավակիրառող մարմնի որոշումը, որի համաձայն պելմենի արտադրատեսակը գտնվում է 19022030000 ծածկագրի տակ, այն է՝ մակարոնային արտադրատեսակների տակ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-21/17 բողոքը քննող հանձնաժողովի 21.02.2017թ. ժամը 17:35-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով և ի լրումն գրություններով ներկայացված դիրքորոշումը:

2. «Օստ-Շին» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները.

«Օստ-Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) 21.02.2017թ. թիվ 9 գրությամբ ԳԲԽ-21/17 բողոքը քննող հանձնաժողովին խնդրել է «Օստ-Շին» ՍՊԸ-ին ներգրավել որպես երրորդ կողմ բողոքի քննության ընթացքում:

Կազմակերպության ներկայացուցիչը ԳԲԽ-21/17 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրել է թվով 112 հաշիվ-ապրանքագրեր և «Շելդա» ՍՊԸ-ի կողմից տրված համապատասխանության հայտարարագրի պատճենը:

Կազմակերպության ներկայացուցիչը, մասնակցելով 21.02.2017թ. ժամը 17:35-ի նիստին, պնդել է, որ Պայմանագիրը կատարվել է պատշաճ կարգով, որը հավաստվում է նաև «Լիկա 1» ՍՊԸ-ի կողմից «Շելդա» ՍՊԸ-ին տրված Պայմանագիրը պատշաճ կատարելու վերաբերյալ տեղեկանքով:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 01.03.2017թ. թիվ ԴՎԱ/518 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊԶԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նիստով վերահաստատել է «Շելդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնագիտական փորձառության վերաբերյալ փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանելու վերաբերյալ իր նախկինում կատարած գնահատումը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-21/17 բողոքը քննող հանձնաժողովի 21.02.2017թ. ժամը 17:35-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը::

4. ԳԲԽ-21/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-21/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար **սննդամթերքի** ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի Մաս I-ի 2-րդ կետի 2.3-րդ ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: **Նմանատիպ են համարվում 1-ին չափաբաժնի համար ձկնեղեն, իսկ 2-րդ չափաբաժնի համար միս, մսամթերք և մսի սննդային ենթամթերքների, մատակարարման պայմանագրերը:**

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Շելրա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի կոնսորցիումը հայտ է ներկայացրել:

4. «Շելրա» ՍՊԸ-ն թիվ 3.4 հավելվածով՝ աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ կազմակերպությունն ունի կնքվելիք

պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ և այդ աշխատանքային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

5. «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի կոնսորցիումը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, **որի ընդհանուր արժեքը կազմել է 50 937 696 ՀՀ դրամ:**

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2016թ. թիվ 3 արձանագրության 3.1 կետով կայացված որոշմամբ «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի կոնսորցիումն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

7. «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի կողմից որպես մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է «Շելդա» ՍՊԸ-ի և «Լիկա 1» ՍՊԸ-ի միջև 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 մատակարարման պայմանագիրը, **որի ընդհանուր արժեքը կազմել է 37 097 540 (երեսունյոթ միլիոն իննսունյոթ հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:**

8. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածի համաձայն՝ «Շելդա» ՍՊԸ-ն պարտավորվել էր «Լիկա 1» ՍՊԸ-ին մատակարարել հետևյալ ապրանքատեսակները՝ «Պելմենի», «Երշիկ կիսաապխտած», «Վարենիկ», «Նրբերշիկ», «Սարդելկա», «Սալ»:

9. «Լիկա 1» ՍՊԸ-ի կողմից «Շելդա» ՍՊԸ-ին 22.11.2016թ. տրված թիվ 03 տեղեկանքի համաձայն՝ «Շելդա» ՍՊԸ-ն բարեխղճորեն և պայմանագրով նախատեսված ժամկետներում իրականացրել է 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 պայմանագրով նախատեսված բոլոր մատակարարումները՝ 37 097 540 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի 1-ին պարբերությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Շելդա» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատել է բավարար:

5. ԳԲԽ-21/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ի 14.02.2017թ. բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.03.2017թ. թիվ ԴՎԱ/518 գրությունը և կից փաստաթղթերը, «Շելդա» ՍՊԸ-ի և «Լիկա 1» ՍՊԸ-ի միջև 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 մատակարարման պայմանագիրը, «Լիկա 1» ՍՊԸ-ի կողմից «Շելդա» ՍՊԸ-ին 22.11.2016թ. տրված թիվ 03 տեղեկանք՝ հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի 1-ի, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)¹ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

2).....».

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ **տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը¹**.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 69-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ **համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում**: Համանման համարվող տնտեսական

¹ Հղումը կատարված է մինչև 09.02.2017թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» N 104-Ն որոշումն ուժի մեջ մտնելը:

գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի ապրիլի 13-ի N 220-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 1170-Ն հրամանով հաստատված «Շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների» ցանկի 1.2-րդ կետի համաձայն՝

1.2	Սննդամթերք	1.2.1	Հացահատիկ, հատիկընդեղեն և ձավարեղեն
		1.2.2	Ալյուր
		1.2.3	Բանջարեղեն
		1.2.4	Մրգեր
		1.2.5	Հատապտուղներ
		1.2.6	Կանաչեղեն
		1.2.7	Միս, մսամթերք և մսի սննդային ենթամթերքներ
		1.2.8	Ձկնեղեն
		1.2.9	Հրուշակեղեն, նպարեղեն (մակարոնեղեն)
		1.2.10	Կաթնամթերք
		1.2.11	Պանիր և պանրամթերք
		1.2.12	Կարագ, մարգարին, յուղ (ծեթ)
		1.2.13	Շաքար, շաքարավազ
		1.2.14	Հաց և հացաբուլկեղեն
		1.2.15	Թեյ
		1.2.16	Սուրճ
		1.2.17	Ձու, ձվի փոշի
		1.2.18	Պահածոներ
		1.2.19	Տարբեր տեսակի համեմունքներ և սոուսներ
		1.2.20	Ղրոժ
		1.2.21	Քացախ
		1.2.22	Աղ
		1.2.23	Աղանդեր
		1.2.24	Մանկական սնունդ
		1.2.25	Ըմպելիքներ (ալկոհոլային և ոչ ալկոհոլային)
		1.2.26	Կենդանիների կեր՝ շան կեր
		1.2.27	Այլ սննդամթերք

Այսպես ՀՀ պաշտպանության նախարարությունը **սննդամթերք** ձեռքբերելու նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգը, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Օստ-Շին» և «Շելլա» ՍՊ ընկերությունների ի կոնսորցիումը:

Ընթացակարգի հրավերով նախատեսվել էր, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: **Նմանատիպ են համարվում 1-ին չափաբաժնի համար ձկնեղեն, իսկ 2-րդ չափաբաժնի համար միս, մսամթերք և մսի սննդային ենթամթերքների, մատակարարման պայմանագրերը:**

«Օստ-Շին» և «Շելդա» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից հայտի թիվ 4 հավելվածով ներկայացվել է գնային առաջարկ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, որի ընդհանուր արժեքը կազմում է **50 937 696 ՀՀ դրամ:**

Կոնսորցիումն, որպես հայտով ներկայացված մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է «Շելդա» ՍՊԸ-ի և «Լիկա 1» ՍՊԸ-ի միջև 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 ապրանքների մատակարարման պայմանագիրը, որի համաձայն՝ «Շելդա» ՍՊԸ-ն պարտավորվել է «Լիկա 1» ՍՊԸ-ին մատակարարել հետևյալ ապրանքատեսակները՝ «Պելմենի», «Երշիկ կիսաապխտած», «Վարենիկ», «Նրբերշիկ», «Սարդելկա», «Սալ», (ընդհանուր առմամբ՝ **37 097 540 ՀՀ դրամի** ապրանք) և «Լիկա 1» ՍՊԸ-ի կողմից «Շելդա» ՍՊԸ-ին 22.11.2016թ. տրված թիվ 03 տեղեկանքը, որի համաձայն՝ «Շելդա» ՍՊԸ-ն բարեխղճորեն և պայմանագրով նախատեսված ժամկետներում իրականացրել է 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 պայմանագրով նախատեսված բոլոր մատակարարումները՝ **37 097 540 ՀՀ դրամ** ընդհանուր գնով:

Կենտրոնը գտնում է, որ «Օստ-Շին» և «Շելդա» ՍՊ ընկերությունների կողմից, որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ

ներկայացված «Շելդա» ՍՊԸ-ի և «Լիկա 1» ՍՊԸ-ի միջև 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 ապրանքների մատակարարման պայմանագիրը համապատասխանում է Ընթացակարգի հարվերով նախատեսված պահանջներին և դիտարկվում է որպես նմանատիպ հետևյալ հիմնավորմամբ.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է սննդամթերք ձեռքբերելու նպատակով: «Շելդա» ՍՊԸ-ի և «Լիկա 1» ՍՊԸ-ի միջև 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 ապրանքների մատակարարման պայմանագրով «Շելդա» ՍՊԸ-ն պարտավորվել էր մատակարարել «Պելմենի», «Երշիկ կիսաապխտած», «Վարենիկ», «Նրբերշիկ», «Սարդելկա», «Սալ» ապրանքատեսակները, որոնք համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի ապրիլի 13-ի N 220-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 1170-Ն հրամանով հաստատված «Շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների» ցանկի 1.2-րդ կետի, ներառված են «Սննդամթերք» բաժնի մեջ, **այսինքն նշված ապրանքատեսակների մատակարարումը Կարգի 69-րդ կետի համաձայն՝ դասվում է համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբին, հետևաբար դրանց մատակարարման պայմանագիրը, Կարգի 69-րդ կետի ուժով, նույնպես պետք է դիտարկվի որպես համանման:**

2. Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Այսպես «Օստ-Շին» և «Շելդա» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր արժեքը կազմում է **50 937 696 ՀՀ դրամ**:

Կոնսորցիումի կողմից որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է Պայմանագիր, որի ընդհանուր արժեքը կազմում է **37 097 540 ՀՀ դրամ**:

Այսպիսով՝ գումարային արտահայտությամբ, Պայմանագիրը համապատասխանում է Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջին: Միևնույն ժամանակ Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, **ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝** տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը **կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը²**:

Կենտրոնը արձանագրում է, որ «Օստ-Շին» և «Շելդա» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Լիկա 1» ՍՊԸ-ի կողմից «Շելդա» ՍՊԸ-ին 22.11.2016թ. տրված թիվ 03 տեղեկանքը, որի համաձայն՝ «Շելդա» ՍՊԸ-ն բարեխղճորեն և պայմանագրով նախատեսված ժամկետներում իրականացրել է 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 պայմանագրով նախատեսված բոլոր մատակարարումները՝ 37 097 540 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Հետևաբար «Օստ-Շին» և «Շելդա» ՍՊ ընկերությունների կողմից պահպանվել է Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, քանի որ վերջինիս համաձայն, պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար ներկայացվում է տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն)

² Հղումը կատարված է մինչև 09.02.2017թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» N 104-Ն որոշումն ուժի մեջ մտնելը:

պատճենը **կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, որը և ներկայացվել է գնահատող հանձնաժողովին:**

Հետևաբար պայմանագրի կատարումն ընդունած կողմից (տվյալ դեպքում՝ «Լիկա 1» ՍՊԸ-ի կողմից տրված) գրավոր հավաստումն արդեն իսկ բավարար է պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար:


Այսպիսով հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ «Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ի կողմից 14.02.2017թ. ներկայացված բողոքն անհիմն է, ուստի ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում ենք մերժել բողոքը:

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
Ահազանգման բաժնի պետ՝



Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ԳԲԽ-21/17 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Ծատուրյան